



ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 դեկտեմբերի 2017 թ.

N 231-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N166 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N166 որոշման մեջ, որոշմամբ հաստատված N 1 և N 2 հավելվածների վերնագրերում և տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով՝ համապատասխան հղվածներով:

2. Որոշման 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների կառավարման լիազորությունը վերապահել որոշմամբ հաստատված N 1 հավելվածի ցանկում նշված լիազորված պետական մարմնին:»:

3. Որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Որոշմամբ հաստատված N2 հավելվածի 21-րդ և 81-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:



Բ. ՄԱՎԱԿՅԱՆ

01.06
7 46/4 09/11 2017

Ց Ա Ն Կ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՀՀ	Պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը	Լիազորված պետական մարմինը
1.	«Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն
2.	«Ստեփանակերտի պարարկեստի քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն
3.	«Ստեփանակերտի Թամարա Քամայանի անվան պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն
4.	«Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն

»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**



Ա. ԼԱՋՐԱՅԱՆ

